# Տերմինների համառոտ բառարան

**Հեղինակ**
Գրքի / հոդվածի / փաստաթղթի գրող

**Creative Commons (CC) արտոնագրեր**
Ներառում է Creative Commons-ի կողմից տրամադրված հեղինակային իրավունքի վեց արտոնագիր՝ ստեղծագործության կամ գիտելիքի փոխանակման կամ վերօգտագործման հնարավորություն ընձեռելով: Ստեղծողները ընտրում են այնպիսի պայմաններ, որոնք ցանկանում են կիրառել, ինչպիսիք են Attribution (by), Share Alike (sa), NonCommercial (nc) եւ Noderivatives (nd): Բոլոր CC արտոնագրերը պահանջում են այլ անձանց նշել հեղինակին:

**Համահեղինակ (ներ / ություն)**
Երբ երկու կամ ավելի հեղինակներ ստեղծում են աշխատանքը համատեղ: Հեղինակները հավասարապես տիրապետում են աշխատանքի հեղինակային իրավունքին, եթե այլ կերպ չեն պայմանավորվել:

**Կոլեկտիվ աշխատանք**
Ժողովածու, որտեղ ներառված են տարբեր հեղինակների մի շարք առանձին և ինքնուրույն ստեղծագործություններ (օրինակ՝ ամսագիր, անթոլոգիա, հանրագիտարան և այլն): Յուրաքանչյուր աշխատանքի/ ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը կարող է տարբերվել ժողովածու աշխատանքի/ ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքից:

**Հեղինակային իրավունք**
Հեղինակի բացառիկ ոչ գույքային (բարոյական) և բացառիկ գույքային իրավունքները իր աշխատանքի նկատմամբ, որն իրավունք է տալիս բնօրինակ աշխատանքի ստեղծողին, սահմանելու, թե ինչ պայմաններով բնօրինակ աշխատանքը կարող է օգտագործվել և տարածվել ուրիշների կողմից:

**Հեղինակային իրավունքի գործողության ժամկետ /տևողություն**
Հեղինակային իրավունքի պահպանության ժամկետ: Պայմանավորված է մի քանի գործոններով և կարող է տարբեր լինել՝ կախված երկրից և աշխատանքի տեսակից: Հեղինակի գույքային իրավունքները գործում են հեղինակի կյանքի ընթացքում և շարունակում են գործել նրա մահից հետո՝ 70 տարի:

**DOI (Digital Object Identifier)**
**Թվային օբյեկտի նույնացուցիչ**
DOI միջազգային հիմնադրամի կողմից հատկացված յուրահատուկ տեղեկանք՝ որոշելու համար համացանցում հրատարակված աշխատանքների բովանդակությունը և վայրը:

**Dspace**
Անվճար բաց կոդով ծրագրային ապահովում է բաց մատչելի թվային պահոցներ ստեղծելու համար:

**Գույքային իրավունքներ**
Իրավունքները, որոնք պաշտպանում են հեղինակի գույքային շահերը՝ նրան տալով իր ստեղծագործության կամ դրա պատճենների օգտագործումը թույլատրելու կամ արգելելու բացառիկ իրավունքը:

**Արգելանք**
Փաստաթղթի ամբողջական տեքստին հասանելիության ժամանակավոր սահմանափակում:

**Բարեխիղճ օգտագործում**
Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերը առանց հեղինակային իրավունքի սեփականատիրոջ թույլտվության ողջամիտ կերպով օգտագործելու և տարածելու որոշակի թույլտվություն, որը չի վնասում նյութը կամ խոչընդոտում հեղինակային իրավունքի սեփականատիրոջ ակնկալվող շահույթը:

**Ինստիտուցիոնալ պահոց**
Բուհական հանրույթի ինտելեկտուալ արտադրանքի հավաքման, պահպանման և տարածման էլեկտրոնային արխիվ:

**Մտավոր սեփականություն**
Ոչ նյութական սեփականություն, որը մարդու ինտելեկտի արդյունք է, ներառյալ հեղինակային իրավունքը, ապրանքային նշանները, առևտրային գաղտնիքները և արտոնագրերը:

**Անձնական ոչ գույքային իրավունքներ**
Ներառում են հեղինակության իրավունքը, հեղինակի համբավի և արժանապատվության իրավունքը,  առաջին հրապարակման իրավունքը և հետկանչի իրավունքը:
Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքներն անօտարելի են և ոչ փոխանցելի ու չեն կարող սպառվել, բացառությամբ, հետկանչի իրավունքը, որը գործում է հեղինակի ողջ կյանքի ընթացքում:

**Մետատվյալներ**

Ինֆորմացիայի վերաբերյալ տվյալներ, որոնք օգնում են դասավորել, գտնել և հասկանալ տվյալները:

**Բաց մատչելիություն**
Հետազոտական և գրական արտադրանքի անվճար հասանելիություն որոշ սահմանափակումներով կամ առանց սահմանափակումների:

**Գրագողություն**
Մեկ ուրիշի աշխատանքի կամ գաղափարների ներկայացնելը որպես քո սեփականը: Գրագողությունը մտավոր գողություն է:

**Նախատպված տարբերակ**
Հեղինակի կողմից ներկայացված բնագրի բնօրինակ տարբերակը (նախքան գրախոսումը կամ խմբագրումը):

**Տպագիր տարբերակ**
Բնագրի գրախոսված տարբերակը նախքան հրապարակումը:

**Հանրային սեփականություն**
Հասանելիությունը հանրությանը՝ առանց իրավական կամ հեղինակային իրավունքի սահմանափակումների (սովորաբար, գույքային իրավունքի պաշտպանության ժամկետի լրանալուց հետո): Ցանկացած անձ կարող է ազատորեն օգտագործել հանրային սեփականություն համարվող գործերը՝ պահպանելով հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները:

**Հրատարակչական տարբերակ**
Ամսագրում կամ կայքում հրապարակված բնագրի վերջնական խմբագրված տարբերակը:

**Պահոց**
Տեղը, որտեղ պահվում են տվյալները:

**Ինքնաարխիվացում**
Աշխատանքի օրինակը առցանց բաց մատչելի շտեմարանում (օրինակ՝ անձնական կայք, ինստիտուցիոնալ պահոց և այլն)

**Ինքնագրագողություն**
Սեփական աշխատանքի նույնական կամ գրեթե նույնական մասերի վերաօգտագործումը առանց հղում անելու բնօրինակ աշխատանքին:

**Հեռացում**
Պաշտոնական դիմումի հիման վրա համացանցային կայքի, համացանցային էջի կամ ֆայլի հեռացում համացանցից:

**Երրորդ կողմի բովանդակություն / հեղինակային իրավունք**

Բովանդակությունը, որը ձեր սեփական աշխատանքը չէ կամ ձեր աշխատանքն է, բայց դուք չեք հեղինակային իրավունքի սեփականատերը՝ պայմանավորված ձեր և մյուս կողմի միջև համապատասխան պայմանագրի առկայությամբ:

**Հետկանչ**

Թեզի կամ փաստաթղթի մասնակի կամ ամբողջական հեռացում թվային պահոցից: